հաստատապէս մահ. ոչ մի կողմից փրկութեան յոյս չկայ, եւ ահա այդ սարսափելի յուսահատութեան մէջ հայրը թողեց, լքաւ իր զաւակը, աղամարդը իր կնոջը, մայրը իր աղջիկը, եղբայրը իր քրոջը. հարուստ, աղքատ, շինական, աղնուական, աշխարհական, հոգեւորական ազնիւորդ կանանով թափուեցին գետի մէջ. գութը, ողորմութիւնը անհետացաւ. ամէն մարդ աշխատում էր իր կեանքը փրկել. շուտով սրընթաց եւ յորձանուտ գետի երեսը լցուեց դիակների, անմեղ զոհերի մարմիններով. ով լողալ գիտէր, մի կերպ ազատւում էր, ով չգիտէր, յատակն էր իջնում. օրհասական կռուից պաշարուելով, լուղորդները խափանում էին միմեանց փրկութիւնը. տղայք, աղջկունք, հիւանդներ ջրի երեսն իբրեւ խոիւ լցուել էին, իբրեւ մրջիւն քշւում էին. յղի կանայք ծանրութիւնից, սանտեայ մայրերը մանուկներով ծանրաբեռնուած, ընկղմում էին եւ անհետանում. միմեանց ոտքերից բռնուելով, ջրի խորքն էին սուզւում. ջուրը քշում տանում էր իբրեւ փայտի տաշեղ։ Մնացեալները կամ լողանալով փրկւում էին եւ հասնում էին եզրը, կամ բռնելով նաւակների ծայրերից, ձիերի եւ գրասանների պոչից, մի կերպով դուրս էին գալիս։ Շփոթութիւնը գնալով սաստկանում էր. Պարսիկների բարբարոսութիւնը իր վերջին ծայրին հասաւ. Նրանք ողորմելի Հայերին ոկսեցին տանջել եւ ստացուածքը ձեռքներից խլել։ Խղճալիների կոծն ու աղաղակը, օգնութեան ձայնը թնդացնում էր սարերն ու ձորերը, բայց ո՞վ էր լսում, ո՞վ էր գթում։ Ով բախտաւոր էր, մի ձի կամ մի գրաստ ունէր, կարողանում էր մի կերպ փրկուիլ, բայց հաղիւ հասնում էր միւս եզրը սրտատրոփ, այնտեղ նոր փորձանք, նոր բարբարական տանջանք եւ մահ սպասում էր. այնտեղ կամ Պարսիկն էր սպանում, իրան կինը եւ գոյքը յափշտակելու համար, կամ իր ընտանեկան գեղեցիկ աղջիկներին